

ձայն քաղաքն ուներ **57.477** բնակիչ, որոնցից  
15.000-ը՝ թուրք, 9000-ը՝ հույն, 726-ը՝ հայ<sup>40</sup>:  
Հայերի քարտկերու ս. կուսավորիլ եկեղեցին  
Հիմնվել է 1820 թ.:

1914 թ. տվյալներով<sup>41</sup> հայերն ունեին հրե-  
ղամյա երկսեռ գպրոց ու մանկապարտեղ: Աշա-  
կերտների թիվը (դպրոցում՝ շուրջ 100, մանկա-

պարաեղում՝ 100) ընդամենը 200 հոգի էր: Դըպ-  
րոցն ուներ 300 օսմանյան ուկի բյուզե, որից  
30-ը վճարում էր եկեղեցին, մնացյալը՝ աշա-  
կերուները:

1915 թ. Տրավիդոնի հայերի հետ միաժա-  
մանակ բռնտպաղթի ենթարկվեցին նաև Տրիպո-  
լիի հայերը:

## 9. ԿԻՐԱՍՈՒՆԻ (ՓԱՌԽԱԿԻՄ) ԳԱՎԱԾՈՎԱԿ

Իրեասոն: Հույներն այս քաղաքն անվանում են  
նաև Թիոսասո (Կեռոսս): Տրիպոլիից կիրասոն  
69 կմ, Տրավիդոնից՝ 153 կմ է: Քաղաքը գեղա-  
տեսիլ գիրք ունի, որտեղարդ տներով ու փողոց-  
ներով, երկու կողմից շրջապատված ապառաժ-  
ներով: Կիրասոնը համառու գավառում կենտ-  
րոնն էր, որ նստում էր գայմագամը<sup>42</sup>:

1909 թ. պաշտանական տվյալներով գավա-  
ռակն ուներ 108.500 բնակչություն, որից 98.000-ը՝  
գյուղերում, ինչ 16.000-ը՝ քաղաքում: 1911 թ.  
տվյալներով, կիրասոն քաղաքում ու շրջակա-  
դյուղերում բնակվում էր 3500 հայ, որոնցից  
200-ը (38 տոտ)<sup>43</sup> գյուղերում: Հայերի մեծա-  
մասնությունը Շապին-Գարահիսարից, Թամդա-  
րայից ու մոտակա վայրերից էին այստեղ գաղ-  
թել<sup>44</sup>:

Հիշված ի այլ վայրերից գեղի ժողովակ' կի-  
րասոն ու շրջակա բնակվալիրեր, հայերի գաղթի  
առանձնապես մեծ թափ է սահանում կիրասոն—  
Շապին-Գարահիսար խճուղու կտորուցումն տվյալ-  
վելոց հետո՝ 1880-ական թվականներից սկսած:

Կիրասոնը հայերն էր հատկապես կաղինի  
արտօհանությամբ: 1910 թ. տվյալներով, ամ-  
բողջ նահանգի արտահանած կաղինի շուրջ 50%-ը  
տվել էր կիրասոնը՝ ավելի քան 400.000 դան-  
թար<sup>45</sup>: Կիրասոնը համարվում է կիրասոն կոլ-  
լավագույն տեսակի կաղինի հայրենիքը: Սե-  
ծովի կովկասյան ափերին՝ Սովումի, Սոչիի և  
այլ շրջաններում կաղինի այգ տեսակի տարա-  
ծողները եղել են այս կողմերից նուաստտն գաղ-  
թած հայերն ու հույները:

1914 թ. կիրասոնի հայկական Սղբային  
վարժարանն ուներ 330 երկսեռ աշակերտ, 16 ու-  
սուցիչ, 800 ոսկի բյուզե: Բյուզեն հայթալիքում  
էր՝ 350 ոսկին՝ աշակերտներից, 130-ը՝ աղքային

կալվածներից, մնացածը եկեղեցական տուրք էր:  
Վարժարանն իր մանկապարտեղով հանգերձ ուներ  
իննամյա գասրնթաց: 1912—1914 թթ. կիրասոնի  
Ազգային վարժարանն ապրում էր ժաղկման շրր-  
ջան: Դպրոցն ապահովված էր որակյալ ու նվիր-  
ված ուսուցչական կազմով: Հոգարարձությունը  
գործում մասնակցություն ու աշակերտություն էր  
ցուց տալիս զարոցի աշխատանքին: Ուսումնա-  
րանի տեսուչը՝ վանեցի Սարգիս Բարսեղյանը  
բարձրագույն կրթությունն ստացել էր Շվեյցա-  
րիայում: Նրա հայ Եվելցարիալում սովորել էր  
ֆրանսիան լեզվի ուսուցչութիւն Պերսուհի Բարսեղ-  
յանը (տեսուչի կինը): Վանեցի Արսեն Հացա-  
դորյանը վերջացրել էր Կ. Պոլսի Կենարոնա-  
կան վարժարանը: Հարգված ու սիրված ուսուցիչ  
էր նաև վանեցի Բարոնակ Կոտուտիկյանը: Վար-  
ժարանն ուներ քառաձայն երգախումբ, գրական,  
թատրոնական խմբակներ<sup>46</sup>:

Կիրասոնի հայերն ունեին երկու եկեղեցի,  
Քաղաքի կենտրոնի և. Գ. Լուսավորիչ կոչմով  
քարտերու շքեղ եկեղեցին հիմնվել է 1838 թ.  
Երկրորդ եկեղեցին՝ ս. Սարգիսը, ժայռագոր հի-  
նավուրց հունական աղոթատեղի էր եղել, որը  
հայերը հույներից գնել էին շուրջ 100 տարի  
առաջ:

1895 թ. արյունու օրերին կիրասոնի հայու-  
թյունը կոտորածից ու թալանից փրկվեց շնորհիվ  
քաղաքի գինուրական հրամանատարի, որը իր  
ձիում վրա նստած, հայկական թաղերու մեջ կը  
շրջեր իր թիկնապահներով, — հայտնում է ակա-  
նատեսներից մեկը:

1915 թ. բռնագաղթն սկսվեց հունիսին, որի  
հետևանքով գրեթե իսպան հայաթափ արվեց այս  
գավառակը<sup>47</sup>:

Թագավանելք: 27 կմ կիրասոնից հեռու փոքր  
ավան, որը կիրասոնի գայմակամությանը ենթա-  
կա Բուլանճը վիճակի կենտրոնն էր: Կիրակի ու  
շաբաթ օրերը այստեղ տոնավաճառի օր էր, ուր

<sup>40</sup> Հ. Հավակիմյան, նշվ. աշխ., էջ 422:  
<sup>41</sup> «Ազատամարտ», 1914, № 1492, «Ուսուցչական հա-  
մագումար Տրավիդոնին մեջ»:

<sup>42</sup> Ներկարումը կիրասոնը համառու նահանգի կենտ-  
րոնն է, որին միացված է նաև Շապին-Գարահիսարի գա-  
ղաքը (Տէ՛ս «Ժամանակակից Թագրիմա», էջ 12):

<sup>43</sup> Հ. Հավակիմյան, նշվ. աշխ., էջ 465:

<sup>44</sup> Մեկ զանթարը հավասար է 35,156 կտ:

<sup>45</sup> «Ազատամարտ», 1914, № 1492,  
Բարձրական Կոտուտիկյանը հայ անվանի բանասահծու-  
հի Միկա Կոտուտիկյանի հայրն է:  
<sup>46</sup> Արշակունի (Հ. Հավակիմյան), նշվ. աշխ., էջ 477:

գալիս էին կիրասոնի և Օրդուի գավառակների բնակիչները:

Թուղանքում ընակվում էր շուրջ 45 առև հայ, մեծ մասը սեփակտնաաեր, Ոմեին փայտաշեն գպրոց:

Գյուղի ս. նիկողայոս եկեղեցին հնուց մնացած, քար ու կրով կառուցված շենք էր:

Պազար-սովի (Սալղունա): Երեք ժամ Բուլանքը արեելք գանվող այս գյուղն ուներ 25—30 առև հայ ընակլություն, որոնք բոլորն էլ մարարաներ էին:

## 10. ՕՐԴՈՒԻ ԳԱՎԱՌԱԿ

Մրգուն (Գոթորիա) կիրասոնից 77, Տրապիզոնից 167 կմ արեմուաք ընկած ծովափնյա քաղաք էր, հիմնված պատմական Գոթորիա քաղաքի վտյրում: Մ. Բժշկյանը այս քաղաքի մասին գրում է, որ՝ «Առաջ հոս ընակսթյուն չկար. մեր օրը ձեռամբ Մահտեսի Ավեաթք Տրապիզոնցի իշխանին՝ ընակություն շինվեցավ ամենայն աղքաց: Օրդուին լեռան վրա հին բերդին ավերակը կերեա. ուր երկաթյա գուռ կա, որ շաա սանդուխքով վար կիշնի մինչև գեարց<sup>47</sup>:

Քաղաքի արեելյան եղերքին ծով թափվող թոքի-տերե փոքր գետի շուրջ ամունը լորանում էր, ջրաղացները չէին աշխատում: Նրանցից մի ժամ արեելք գտնվում է Ճիկելի կամ Մելեթի գետու: Քաղաքի տները տարածված էին Բոգ-թեփե լեռան լանջերին ու հարավարեելյան սառուտներին:

1908 թ. պաշտոնական ավյալներով գավառում ընակվում էր 130.800 մարդ, որից 103.16-ը թոքք, մահմեգական վրացի, շերքեղ, լաւ, հույն ու պարսիկ էին, 17069-ը՝ քրիստոնյա հույն, իսկ 10.315-ը՝ քրիստոնյա հայ: 1911 թ. Օրդու քաղաքում ապրում էր շուրջ 3000 հայ<sup>48</sup>: Օրդու քաղաքի հայերի գոգակի մասը գաղթել էր Թամլարայց, Շապին-Գարահիսարից և Կիրասոնից: Վերջին աարիներին զգալի թիվ էին կազմում շրջակա գյուղերից քաղաք փոխաղովողները:

Հայերը ակնառու աեղ էին գրավում քաղաքի տնտեսական կյանքում: Արհեսաավորների մեծամասնությունը հայ էր: Կային մասնագեա հացագործներ, պղնձագործներ, թիթեղագործներ, կոշկակարներ, ոսկերիչներ, երկաթագործներ, աաաղագործներ, որմնագիրներ և այլն: Ուստայնանկությունը համարյա հայերի մենաշնորհն էր: Գործում էին ամեն աեսակի կտավեղեն, երեսարիշներ, բաղնիքի խավլիկներ, վենջակ (փեշաոմոլ): Զկնորսությունը տղամարդկանց սիրած զրաղմունքն էր: Զանասեր արհեսաավոր լինելու շնորհիվ Օրդուի հայերը. մեծ մասամր րարեկեցիկ կյանք էին վարում: Քաղաքի առեատուրը գտնվում

էր երկու մրցակից աղղությունների՝ հայերի և հույների ձեռքին:

XIX դ. վերջերին Օրդուի շրջանի հայ գյուղացիները, Տրապիզոնի ու Կիրասոնի շրջաններից բերելով կաղինի առնկեր, այս կողմերում հիմք են ղնում կաղինի (կաղնուա) մշակությունը: Այդ եկամարեր պատուղ արաասովոր արագությամբ տարածվում է գավառակի շաա գյուղերում: 1900-ական թվականներին կաղնուաներն այնքան շատացան, որ կաղինը գարծավ շրջանի արաահանվող առաջնքներից մեկն ու ժողովրդի հարստության գլխավոր աղյուրը:

Օրդու քաղաքի տնտեսական կյանքն ակնառու վերելք է ապրում առանձնապես 1880-ական թվականներից հետո՝ Օրդու-Աերասահա ինճուղու կառուցման շնորհիվ: Այդ ժամանակվանից, հատկապես 1908 թ. գգալիորեն ավելանում է Աերասահաիցի նահանգից Օրդու տեղափոխվող հայերի թիվը:

Օրդուն ուներ 6-ամյա երկսեռ գպրոց և եռամյա մանկապարտեղ, որաեղ սովորում էր շուրջ 600 երեխա ու պաաանի: Աղջիկների գասարանը աղաններից առանձին էր՝ նույն շենքի երրորդ հարկաւմ: Դպրոցն ուներ 17 ուսուցիչ, շուրջ 1000 ուսկի րյուզե, որից 50 ոսկին գպրոցին կից կտանուտից սաացված եկամուան էր, 100-ը՝ եկեղեցին էր վճարում, իսկ մնացածը աշակերաններից գանձվող ուսման վարձն էր:

Օրդուի հայ ռողոքականներն ունեին իրենց գպրոցը՝ շուրջ 60 աշակերտով ու փորձառու ուսուցիչներով: Օրդուի ս. Միսակ եկեղեցին հիմնվել է 1834 թ.:

Բոգ-թեփեն Օրդուին մերձակա՝ հայերի առաջին ու գլխավոր ընակավայրն էր: Քաղաքի ցածրագիր թաղերի ընակիշներից շաաերի համար ամառանոցային վայր էր: Տարիների ընթացքում զգալի թվով հայեր հասաավել էին նաե Օրդու քաղաքի Զեյթուն-մահալեսի, Աարայ-մահալեսի, Տաղպալը և այլ թաղերում:

1850-ական թվականներից Բոգ-թեփեում ապրող շուրջ 150 առև հայերն ունեին «Ծովսեյան» կոչված գպրոցը:

Համշենից ու Սկ-գեաից ղաղթած համշենա-

<sup>47</sup> Մ. Բժշկյան, նշվ., աշխ., էլ 53:

<sup>48</sup> Մրցակիւնի (Հ. Հովհաննես), աշխ., աշխ., էլ 488—489,